

ԱՍՏԳԻՒ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՇԱՂԿՈՂ (ՃԳ Դ.)

Մաշտոցյան Մատենադարանի № 3033 ձեռագիրն ունի իր որույն տեղը հայ մանրանկարչության պատմության մեջ։ Սա 1251 թվականի Հոռմելայում նկարագարդված մի ավետարան է, որի մասին անվանի արվեստաբան է, Ա. Դուրնովոն գրում է. «Այս փոքրիկ, շրեղագարդ ձեռագրի մեջ շատ հստակ է հարուստ նկարագարդված այս խորանները խիստ հեռացել են XII դարի երկրորդ կեսի ձեռագրի կոթողայնությունից և կատարման լայնությունից։ Յուրաքանչյուր մանրամասի, թոշունների յուրաքանչյուր փոքրիկ ֆիգուրայի կերտման խնամաշան աշխատանքը, ոսկեզօծելու և ներկելու հիմնայի տեխնիկան դառնում են XIII դարի Կիլիկիայի գեղանկարչության տարրերի գծերը»<sup>1</sup>։

Ինչպես տեսնում ենք, ձեռագիրը արժեքավոր է, ոչ միայն հարուստ մանրանկարներով, այլ նաև նկարագարդման ինքնատիպ արվեստով։

Չեռագիրը բազմիցս արժանացել է մատենագետների ուշագրությանը, ուստի անհրաժեշտ ենք համարում պարզաբանելու նրա հետ կապված մի թյուրիմացություն։

Մագաղաթյա այս ավետարանը բաղկացած է 411 թերթից, մեծությունը՝  $12 \times 15$ , գրությունը՝ երկսյուն, բոլորգիր, կազմը՝ ա. արծաթակազմ, տերունական քանդակով, բ. գրոշմազարդ կաշի։ Աստաոր՝ ա. նարնջագույն մետաքս, բ. նարնջագույն մետաքս և զեղեցիկ դաշտու կտոր, ա. պահպանակի վրա ունի լուսանցազարդ, 2ր-3տ խորաններում եկսերիոսի նումակը։ Կանոնների խորանները՝ 4ր-5ա, 6ր, 7ր-8ա, 9ր-10ա։ Վեցին 11ր-12ա էջերի խորաններում գրված է բնծայականը։ Ունի շորս ավետարանի՝ 19ր, 125ր, 197ր, 315ր և շորս անվանաթերթ՝ 14ա, 126ա, 198ա, 316ա։ Չեռագիրը հարուստ է լուսանցազարդերով ու զարդագրերով։

Հիշատակարանը մեզ անդեկացնում է. «Ես Վարդան նուաստ ծառայ Քրիստոսի և աշակերտ սուրբ տեսանս և ըստ շնորհացն աստուծոյ բապաստոր և փակակալ մեծափառ տաճարացս աստուծոյ տանս հայրապետական տառուածապահ՝ զղեկիս, որ կոչի Հոռմելայ, ցանկացող եղեալ բարեաց հանապարհի առաքինեաց... և զրել ետու զսուրբ մատեանս զայս ծաղկերանդ և ոսկենկար յաւրինուածով ի լու և յրնտիր աւրինակէ... յիշեսչիր սրտի մտաւք զմեղուցեալս Վարդան՝ վկազմող և զստացաւդ սուրբ մատեանիս... ընդ նոսին աղաշեմ և զիս յիշման արժանի առնել զանարժանս ի դրաց Սարդիս սարկաւագ և զծնաւզսն իմ և զամենայն արեան մերձաւրսն իմ, զարձեալ աղաշեմ զիշուզսդ յիշման արժանի առնել զտէր Ստեփանոս արհեապիսկոպոս Մելիտենոյ

1. Ա. Ա. Դուրնովոն, Հին հայկական մանրանկարչության ալբոմ, Երևան, 1952, նկ. 26.

և զհարազատ եղբայրն իւր՝ զհայր Մակար, որ նիւթոյս առիթ եղեն...»: Այսպիսով մեղ հայտնի է գառնում, որ ձեռագրի դրիչն է Սարգիս սարկավագը, իսկ պատվիրատուն՝ Հռոմելայի մհետափառ տաճարի փուկակալ Վարդանը, որը միաժամանակ ձեռագրի կազմողն է:

Ինչպես տեսնում ենք, ծաղկողի մասին հիշատակարանում որևէ խոսք չկա: Սակայն մինչև այժմ Մատենագարանի № 3033 ձեռագիրը ճանաչված է եղել որպես Վարդան ծաղկողի ավետարան և կարծեցյալ այդ ծաղկողի անունը մտել է Եթիկիայի մանրանկարչական արվեստի պատմության մեջ, դասվելով XIII դարի Հռոմելայի նշանավոր նկարիչների շարքում:

Ո՞րն է թյուրիմացության ուժառնար:

Վերը նշեցինք, որ ձեռագրի շրեզմագրդ խորաններից վերջին երկուսը (11ր—12ա) պարունակում են բնծայտական: Այստեղ, ուկե խորքի վրա, կապույտ ներկով գրված է:

«Ով յանսկիզբն ծոցոյ բան,  
Որ ծաղկեցար յազգս մարդկան,  
Եւ մեղ շնորհս քո շրման,  
Հեղեր աւրհնեալդ յափտեան:  
Դու պանող քո բանի  
Զվարդան արա յիշման արժանի»:

Հիշված «պանող» բառը մտածել է տվել, որ զա վերաբերում է ծաղկողին, որ իր Վարդանը պանել՝ նկարազարդել է ձեռագիրը: Իրականում, սակայն պինուլ բառն այստեղ ծաղկող իմաստը չունի: Այդ երեսում է հետելալից: Հատկապես Հռոմելայի գրչության դպրոցում ստեղծված ձեռագրերից շատերը (մանավանդ Կոստանդին Ա. կաթողիկոսի կողմից պատվիրվածները) սովորաբար ունենում են պատվիրատուին նվիրված բնծայտականներ, որոնք միշտ տեղավորված են լինում վերջին խորաններում: Դրանք գրվում են շափածո և նույնիսկ նրանցից մի բանիսը կրկնում է ին ճիշտ նույն բովանդակությունը, այսինքն՝ բնօրինակված են միմյանցից: Այսպես, օրինակ, Ֆրիերի պատկերասրահում է գտնվում 1253 թվականի Հռոմելայի մի ավետարան, որի գրիչն ու նկարիչն է Հովհաննեսը: Չեսազրի ստացողն է Կոստանդին Ա. կաթողիկոսը, որին նվիրված բնծայտականը հետելալն է.

Ով յանսկիզբն ծոցոյդ բան,  
Որ ծաղկեցար յազգս մարդկան,  
Եւ զշնորհս քո շրբթան  
Հեղեր աւրհնեալդ յափտեան:  
Դու պանող քո բանի եւ  
Հզպարդարող այսմն տառի  
Զաթոռ Կոստանդին հովի բանի  
Յաթոռ նստո բնդ Փետրոսի:

Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես «պանող», «զարդարող» բառերը վերաբերում են ձեռագիրը ստացող Կոստանդինին և գործածվում են այն իմաստով, որ Կոստանդինը հոգ է տարել ավետարանի «ոլձնման», ձևավորման համար:

Թորոս Ռոռինի վրձինով 1260 թվականին Հռոմելայում նկարադարդված



л. 1

մի ավետարան (Երուսաղեմ, ձեռ. № 2660), դարձալ պատրաստվել է Կոստանդին Ա. կաթողիկոսի համար և ունի նույն ընծայականը:

Նույնպիսի մի ընծայական թորոս Ռուսինը նվիրել է 1262 թվականին իր նկարագարդած ձեռագրի պատվիրատու Կոստանդին Ա. կաթողիկոսի եղբոր որդուն՝ Թորոսին:

...Եւ ստացող այսմ տասի  
Եւ զարդարող սուրբ կտակի,  
Եւ Թորոս նորին եղբոր որդի...<sup>2</sup>

Ինչպես երևում է, այս ընծայականի օրինակը արդեն լայն տարածում էր գտել և հանդիպում է ոչ միայն Հռոմեացի, այլ նաև Կիլիկյան մյուս զրչության կենտրոններում նկարագարդված ձեռագրերում (օրինակ, 1295 թվականին Դրագարկում նկարագարդված ավետարանում, Մատենադարան, ձեռ. № 6290):

Թորոս Ռուսինի նկարագարդած, 1266 թվականի Մաշտոցի (Երուսաղեմ, ձեռ. № 2027) պատվիրատուն վարդան եպիսկոպոսն է: Զեռագիրը նկարագրելիս Գ. Հովսեփյանը գրում է. «Անհավանական չէ, որ այս վարդան եպիսկոպոսը նույնը լինի՝ Զեյթունի 1256 թվի ավետարանի հիշատակարանի մեջ հիշված «կուսակրոն քահանան» վարդան փակակալ աստվածքների տաճարացու և կազմող սորա», որ տարիներից հետո Մաշտոցի ստացման ժամանակ արդեն եպիսկոպոսական աստիճան էր ստացել»<sup>3</sup>:

Ինչպես տեսանք, մեր ձեռագրի հիշատակարանում նույնպիս վարդանը հիշվում է որպես փակակալ և առնչվում է ձեռագրին որպես ձեռագրի կազմող ու ստացող: Այսպիսով, № 3033 ձեռագիրը Վարդանի պատվիրով գրված միակ ձեռագիրը չէ:

Հիշված փաստերը զալիս են հաստատելու, որ ձեռագրում եղած ընծայականը նվիրված է Վարդանին, որ «աղմող» է կոչվել որպես պատվիրատու և ոչ ծաղկող:<sup>4</sup> Իսկ ո՞վ է ծաղկողը: Հիշատակարանի շարունակության մեջ կարգում ենք. «Ընդ նոսին աղաշեմ և զիս յիշման արժանի առնել՝ զանարծանս ի զրշաց Սարգիս սարկաւագ և զծնաւզոն իմ»: Իսկ Վարդանը ասում է. «Գրել ետու զսուրը մատեանս զայս ծաղկերանդ և ոսկենեկար յարինուածով ի լավ և յրնաիր աւրինակէ»: Շատ հավանական է, որ հենց Սարգիսն էլ նկարագարդել է: Հայտնի է, որ ծաղկողները հաճախ իրենց անվանում էին պարզապիս «գրիշ»: Բերենք նման բազմաթիվ օրինակներից մեկը: 1260 թվականի Հռոմեացի ավետարանը նկարագարդող Թորոս Ռուսինը (Երուսաղեմ, ձեռ. № 2660) ձեռագրում անվանվում է՝ գրիշ Թորոս. «Վայելացուցանել զսա ոսկեով և զանազան նիւթով բաղմամեղ գրշին Թորոսի. զրեալ ձեռամբ Աւետիր քահանայի»:

*Աւետիրի Մխիթարյանների վերջերս հրատարակած մանրանկարչական*

2 Ավետարան (Բալթիմոր, Ռուսերի ժողովածու, № 539), 1262, Հռոմեաց, դրիչ և նկարիչ Թորոս Ռուսին:

3 Գ. Հովսեփյան, Ավետարանը և ուսումնասիրություններ Հայ արքաների և մշակույթի պատմության, Ելու-Յորը, 1943, սբ. Բ, էջ 38:


4 Առևյ հողման արդեն հանձնված էր «Յանրերի» խմբագրությանը, երբ լույս տեսավ պրոֆ. Ա. Տեր-Ներսանյանի գրախոսականը է. Ազարյանի «Կիլիկյան մանրանկարչությունը 12—13-րդ դարերում» գրքի մասին, որտեղ նույնպես Վարդանը ծաղկող չի համարվում (ան'ս «Առվետական արքաներ», Երևան, 1968, № 6):

Ալբոմի վերջում զետեղված «Գիրք ձեռնադրութեան» ձեռագրի մանրանկարները դիտելիս, առաջին խև հայացրից նկատեցինք, որ նրանք սերտ աղերս ունեն Մաշտոցյան մատենադարանի № 3033 ձեռագրի նկարների հետ, այսինքն՝ որեւէ է որ նույն նկարչի աշխատանքը լինեն: Ծանօթ էին մեզ նկարչական ոճը, լուսանցաղարդերում գերակշռող հագեցված կապույտը, մանավանդ զարդագրերը, որոնց մեջ հատկապես «Հ» սիրամարդով տառի ձիշտ կրկնօրինակին հանդիսանալ էինք № 3033 ձեռագրում:




Եկ. 2

Գիրք ձեռնադրութեանց (Վենետիկ, ձեռ. № 1657/440) ձեռագրի պատմությունից հայտնի է զառնում, որ XIII դարի այս հետաքրքրական ձեռագրից ներկայումս մնացել է միայն 45 թերթ: Ձեռագրի հիշատակարանից (Էջ 45թ) տեղեկանում ենք, որ զրգել է 1248 թվականին «ի հոչակավոր ուխտ, որ կոչի Զառնուկ», Խաչատուր Եղիսկոպոսի հրամանով: Գրիշն է Սարգիսը՝ «զնորակերտ գրիշն Սարգիս եւ զծնաւզս իմ, եւ զուսուցիշն իմ զկիւրակոս...»): Արդյոք սա նույն՝ № 3033 ձեռագրի զրիշ Սարգիսը չէ՞: Ալբոմի ներածության հեղինակ Հ. Մեսրոպ Ճանաշլանը, քննության առնելով այդ ձեռագրի մանրանկարները, տառմ է. «Եյս արվեստագետը հավանաբար Սարգիսն է, որ կանվանե ինքինքը «նորակերտ գրիշ»: Գրիշ բառը ձեռագրական լեզվին մեջ ունի նաև, ինչորեւ բովեցավ հաճախ, ծաղկողի կամ մանրանկարչի իմաստ: Ան սկսնակ մը կը



Խ. 3



bl. 4

Համարի ինքզինքը, ոչ թե անշուշտ գրչության արվեստին, որքան զարդանկարչության մեջ: Յիշատակելով իր ուսուցիչը՝ Կիրակոսը, որ յաջողակ մանրանկարիչ մը եղած է, և վարժապետ նաև Թորոս Ռոսլինի, ծաղկողի իր հանդամանը՝ իր շեշտե հայտնապես»<sup>5</sup>:

Ինչպես տեսնում ենք, Մ. Ճանաշյանը հավանական է համարում, որ զրիշ Սարգիսը կարող է նաև ձեռագրի նկարագարդողը լինել:

Մեր ձեռագրում Սարգիսը շի հիշատակում իր ուսուցչի անունը, սակայն ուսումնասիրողների կողմից նկատվել է, որ ձեռագրի ավետարանիշները խիստ նման են Կիրակոսի ձեռագրի ավետարանիշներին (Մատենադարան, ձեռ. № 7690): Լ. Աղարյանը հնիթագրել է, որ № 3033 ձեռագրի նկարիչը (նրա կարծիքով՝ Վարդանը) ձեռագիրն ընդօրինակել է իր ուսուցիչը՝ Կիրակոսից<sup>6</sup>: Իրողությունն այն է, որ № 3033 ձեռագրի նկարչի անունը նույնպես կապվում է Կիրակոսի հետ:

Ձեռագրերի զրության ժամանակը նույնպես համապատասխան է՝ 1248 և 1251 թթ.:

Մի հետաքրքրական փաստ ևս դալին է հասուատելու, որ այդ երկու ձեռագրերի ծաղկողը միևնույն Սարգիսն է: Գիրք ձեռնադրութեանցը, ինչպես վերը հիշվեց, դրվել է Զառնուկի մենաստանում: Մ. Ճանաշյանը հաստատում է է. Հոնիկյանի տված պատմական վկայությունը այն մասին, որ Զառնուկը ունետք է գտնվեր Մելիտենեի շրջակայրում՝ ոչ հեռու Կիլիկիայից: Սրա օգտին է վկայում Մատենադարանի № 3033 ձեռագրի հիշատակարանում Սարգիս գրչի տված հետեւյալ տեղեկությունը. «Դարձեալ աղաշեմ զյիշողսդ յիշման արժանի տոնել զույր Ստեփանոս արճեպիսկոպոս Մելիտենոյի և զհարազատ եղբայրն իւր՝ զհայր Մակար, որ նիւթոյս առիթ եղեն»: Այս Մելիտենի Ստեփանոս եպիսկոպոսը հավանաբար խրախուսել է Վարդանին՝ պատվիրելու սույն ավետարանը: Ստեփանոսը միաժամանակ Կոստանդին Ա. կաթողիկոսի գրան սպասավորն էր և 1248 թ. ձեռագիր էր պատվիրել Կիրակոս գրչին (Բարձրերդի ավետարանը): Կիրակոսի այս ձեռագրում հանդիպում ենք Ստեփանոսին նվիրված նիշտ նույն ընծայականին: Նշանակում է՝ № 3033 ձեռագրի զրիշ Սարգիսը վարդանին նվիրված ընծայականը ընդօրինակել է իր ուսուցիչը՝ Կիրակոսի 1248 թվականի ավետարանից:

Կարծում ենք, բերված փաստերը կասկած չեն թողնում այն մասին, որ № 3033 ձեռագրի զրիշ Սարգիսը Զառնուկի մենաստանում 1248 թվականին ստեղծված Գիրք ձեռնադրութեանց ձեռագրի ընդօրինակող Սարգիսն է:

Այսպիսով, պարզվում է, որ Մատենադարանի № 3033 ձեռագիրը, որ դրվել է նկարագարդով է 1251 թվականին Հոռմելլայում, շի ունեցել Վարդան անունով ծաղկող, Վարդանը միայն ձեռագրի պատվիրատուն է: Զեռագիրը նկարագարդել է հավանաբար նույն ինքը՝ զրիշ Սարգիսը, որը 1248 թվականին գրել է նկարագարդել է նաև Վենետիկի № 1657/440 ձեռագիրը:

Վենետիկի ձեռագրի արվեստագետի մտսին իր գնահատականը տալիս Հ. Մ. Ճանաշյանը ավելացնում է. «Ներկայումս իրմե ծանոթ ուրիշ զործեր շունինք: Գուցե քննական ուսումնասիրություններ երեան հանեն ապագային՝ իր-

<sup>5</sup> «Հայկական մանրանկարչություն», Աննետիկ, 1966, էջ 62:

<sup>6</sup> Լ. Աղարյան, անդ, էջ 96:

մե հասած ուրիշ արտադրություններ, որոնք անշուշտ պիտի նպաստեն ավելի և ճշտելու անոր արվեստագետի զիմապիծք»<sup>7</sup>:

Կարծում ենք, մեր ավետարանի Հռի մանրանկարները բավականին հարուստ տվյալներ են ընձեռում այդ շնորհալի արվեստագետին XIII դարի Հոռմելայի գրչության դպրոցի նշանավոր մանրանկարիչների շարքը դասելու համար:

Ա. Բ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

### МИНИАТЮРИСТ САРГИС (XIII ВЕК)

Роскошные миниатюры Евангелия № 3033 Матенадарана им. Маштоца в свое время искусствовед Л. А. Дурново приписывала Вардану.

В статье приводятся данные, доказывающие, что Вардан является не миниатюристом, а заказчиком (получателем) рукописи. Иллюстрации этой рукописи перекликаются с миниатюрами рукописной «Книги предсказаний», хранящейся в Венеции. Имя переписчика обеих рукописей— Саргис. Совпадают также время и место написания (Ромкла, XIII век). Вполне вероятно, что переписчик Саргис является и миниатюристом этой рукописи.

A. B. GUEVORKIAN

### LE MINIATURISTE SARGUIS (XIII SIECLE)

Les somptueuses miniatures de l'Evangile № 3033 du Maténadaran ont été attribuées par le critique d'art L. A. Dournovo à Vardan.

L'auteur de l'article démontre que Vardan est non le miniaturiste, mais la personne qui a commandé le manuscrit en question. Les enluminures de ce manuscrit sont très proches de celles du „Livre de prédications“, manuscrit conservé à Venise. Le nom du copiste de ces deux manuscrits est Sarguis. Le lieu et l'époque de la création des manuscrits coïncident (Hromkla, XIII siècle). Il est probable que le copiste Sarguis soit également l'enlumineur de ces deux manuscrits.

